

4. ԱՆՁՐԵՒ

Բացաստանը վարագուրեց անձրեւին քօղքն ամպային.
Գիւղական համբուն ողողէր է ջուրին ծափծափն ընդհանուր.
Անդերու մէջ կը կաթոտի ճերմակ փրփուրն արծպային:

Օ՛հ լիութիւնն որ ամէն կողմ հրճուանքի պէս կը գեղու.
Օ՛հ, քաղցրութի՛ւնն ուր կը թառի անուրջս անյագ գերթ մեղու:

Տարափն անդու կը լըճանայ, կը շափշափէ միշտ խայտակ,
Եւ արեւի պէս կը փայլի ճամբուն սալարկն ըսպիտակ...

5. ԱՆԴԱՐՁ

Լուսնի լոյսը ծառերէն ծաղիկի պէս էր կախուեր.
Ապրիմ-մեռնիմ մը ձեռքըս՝ սիրոյս ճամբան ես ինկայ.
Ա՛հ, լըսէի՛ր, տերեւին հովը ինչեր կը հծծեր:

“Կը սիրէ՛ զիս, չի սիրեր, քի՛չ մը, բընա՛ւ... տարփագի՛ն...”
Մէկիկ մէկիկ փետտեցի, գաղձերուն հետ ձանձրոյթիս
Եւ արիւնող փուշին հետ սրտիս միսուող թախծանքին:

Ինչպէ՛ս կրկնեմ բարբառը երիցուկին մարգարէ,
Յէ՛ք ծաղիկ, զոր խեղդեցի վայրկեանի մը մէջ անյոյս՝
Ուր ձեռքիս մէջ կը սուրար ձեռքիդ երազն յամպարէ:

Ինչպէ՛ս կրկնեմ տաղերը նարկիսներուն ու վարդին,
Ու վիպերգը՝ կեռասէ բաղրոններուն վրայ ձիւնող
Ճերմակ բուրեան շափրակի բաղիլներու մեղեդի՛ն:

Շամանդաղին մէջ՝ թել թել կ'իյնայ ջրցայտքն անտարբեր.
Լուսնի լոյսին կ'երկարին առուակի գոյգ մը թեւեր,
Ու շրջավայրը կ'ըլլայ աղապատանք մը տարփոտ:

Ճամբուն վըրայ կը կրկնէ աղբիւրն անվերջ հեքեաթներ,
Գուռն հիացիկ մանուկի աչքի մը պէս է բացուեր.
Ջրարբբքին մէջ կ'ուրուագրէ լուսինն աղջկան մը պատկեր: